



# ԺՈՒՌՆԱԼԻՍՏՆԵՐԻ «ԱՍՊԱՐԵԶ» ԱԿՈՒՄԲ

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ  
ՀԱՅԱՍՏԱՆ-3102, ԳՅՈՒՄՐԻ, ՊՈՒԵԿԻՆԻ Փ. 96, ՀԵՌԱՍՈՄ՝ (0312) 50622

## JOURNALISTS' CLUB "ASPAREZ"

NON-GOVERNMENTAL ORGANIZATION

POUSHKIN STREET 96, GYUMRI, ARMENIA 3102, TEL: (0312) 50622

Email: [levon@asparez.am](mailto:levon@asparez.am) <http://www.asparez.am> <http://www.publicdata.am>

*armavir@mda.gov.am*  
*Arina metsoyan*

«12» մայիսի, 2016

Արմավիրի մարզպետ Աշոտ Ղահրամանյանին  
Հասցե՝ ք. Արմավիր, Արովյան 71  
Հեռ.՝ (0237) 2-37-16, 5-08-08  
Էլ. փոստ՝ [armavir@mtaes.am](mailto:armavir@mtaes.am)

Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբի նախագահ Նադեժդա Հակոբյանից

Հարգելի պարոն Ղահրամանյան,

Ժուռնալիստների՝ «Ասպարեզ» ակումբը գործընկեր կազմակերպությունների հետ իրականացնում է «Հանրային մասնակցություն տեղական ինքնակառավարմանը» (ՀաՄաՏեղ) ծրագիրը, որի հիմնական նպատակներն են տեղական ինքնակառավարման որակի բարձրացումը, Հայաստանում կառավարման ապակենտրոնացումը, տեղական ինքնակառավարմանը հանրային մասնակցության խթանումը, ինչպես նաև՝ ՏԻՄ-երի հաշվետվողականության և թափանցիկության մակարդակի բարձրացումը: Ծրագիրն իրականացվում է Համայնքների ֆինանսիստների միավորման (ՀՖՄ) ղեկավարությամբ կազմված մի քանի հասարակական կազմակերպությունների կոնսորցիումի կողմից: Կոնսորցիումի մյուս կազմակերպություններն են Տեղեկատվական համակարգերի զարգացման և վերապատրաստման կենտրոնը (ՏՀԶԿԿ), Երեւանի մամուլի ակումբը (ԵՄԱ), Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբը, Եվրասիա համագործակցություն հիմնադրամը (ԵՀՀ) և Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոնը (ՀՌԿԿ): Ծրագիրն իրականացվում է ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության դրամաշնորհային օժանդակությամբ, ծրագրի տևողությունը 5 տարի է:

Ծրագրի շրջանակներում ակումբը մի քանի ամիս առաջ օրենքով սահմանված գաղտնիք չհանդիսացող տեղեկությունների հարցումներ է հղել մարզի բոլոր համայնքապետերին, խնդրել այդ տեղեկությունները տրամադրել ակումբին՝ օրենքով սահմանված ժամկետներում: Հարցվել են համայնքի ավագանու 2014 և 2015 թվականների բոլոր որոշումները, համայնքի զարգացման քառամյա ծրագիրը, բյուջեի կատարողականի հաշվետվությունը, համայնքի ղեկավարի որոշումները, հաստատված հաստիքացուցակը և այլն: Ստանալով այդ պատասխանները, ուսումնասիրել և ամփոփել ենք դրանք: Այժմ նպատակահարմար ենք համարում այդ ամփոփումները մարզ առ մարզ ներկայացնել մարզի համայնապետերին, քննարկումներ կազմակերպելով մարզկենտրոն քաղաքներում:

Այս նամակով, խնդրում եմ Ձեզ թույլ տալ մարզպետարանի դահլիճում անցկացնել այդ քննարկումը հունիսի 3-ին ժամը 12-ին: Նախատեսվում է, որ քննարկումը կտևի 2 ժամ: Այդ դահլիճի տրամադրման անհնարինության դեպքում, խնդրում եմ հնարավորություն տալ

5729-16  
13 05 2016

այդ քննարկումն անցկացնել Արմավիրի՝ մարզպետարանի ենթակայության որեւէ այլ դահլիճում: Ձեզ եւ մարզպետարանի համապատասխան պաշտոնյաներին նույնպէս հրավիրում եմ մասնակցելու այդ քննարկմանը:

Մարզպետարանի եւ Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբի միջեւ այս խնդրանքին վերաբերվող հետագա աշխատանքների արդյունավետ կազմակերպման համար, խնդրում եմ մարզպետարանից հանձնարարել որեւէ պաշտոնյայի որպէս կոնտակտային անձ, մեզ հաղորդելով անունը եւ կոնտակտային տվյալները: Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբի կողմից այդ քննարկման բարեհաջող կազմակերպման համար կոնտակտային անձ է լինելու ծրագրի իրավաբան Արինա Մեծոյանը, հեռախոս. 031250622, էլ. հասցե. [aspareziravaban@gmail.com](mailto:aspareziravaban@gmail.com)

Հարգանքներով՝

Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբի նախագահ

Նադեժդա Հակոբյան

Ծրագրի իրավաբան-համակարգող՝ Արինա Մեծոյան, հեռ. 095 270 277